ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 111

ք. Երևան 25.03.2024թ

ՀՀ ՊՆ կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-24-20/3» ծածկագրով մրցույթի /այսուհետև՝ Մրցույթ/ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել են հետևյալ ֆիրմայի և մոդելի տեխնիկաները՝

- 1-ին չափաբաժնի մասով՝ բուլդոզեր բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի D-275 մոդելի, որին համարժեք է համարվում CAT ֆիրմայի D-9 մոդելի բուլդոզերը,
- 2-րդ չափաբաժնի մասով՝ բուլդոզեր KOMATSU ֆիրմայի D-65 մոդելի, որին համարժեք է համարվում CAT ֆիրմայի D-6 մոդելի բուլդոզերը,
- 3-րդ չափաբաժնի մասով՝ էքսկավատորներ բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի PC300-8MO մոդելի, որին համարժեք են համարվում CAT ֆիրմայի CAT330 մոդելի և HYINDAI ֆիրմայի HX300SL մոդելի էքսկավատորները,

Վերը նշված չափաբաժիններին ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Պրեմիում Մաշիների Էյ Էմ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման ընթացքում արձանագրել է հետևյալը՝

- Ընկերության կողմից ներկայացված հայտով 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում ներկայացված է SHANTUI ֆիրմային անվանումով բուլդոզեր և նշված է, որ այն համարժեք է KOMATSU ֆիրմայի D-275 մոդելի տեխնիկային,
- Ընկերության կողմից ներկայացված հայտով 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում ներկայացված է SHANTUI ֆիրմային անվանումով բուլդոզեր և նշված է, որ այն համարժեք է KOMATSU ֆիրմայի D-65 մոդելի տեխնիկային
- Ընկերության կողմից ներկայացված հայտով 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում ներկայացված է JCB ֆիրմային անվանումով էքսկավատոր և նշված է, որ այն համարժեք է բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի PC300-8MO մոդելի տեխնիկային,

ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի և Մրցույթի հրավերի 8.8-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Քանի որ Մրցույթի հրավերով 1-3-րդ չափաբաժինների մասով հստակ սահմանված են պահանջվող տեխնիկաներին համարժեք տեխնիկաները, իսկ «Պրեմիում Մաշիների Էյ Էմ» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրերը վերը նշված չափաբաժինների մասով չէին համապատասխանում Մրցույթի հրավերի պայմաններին, գնահատող հանձնաժողովը «Պրեմիում Մաշիների Էյ Էմ» ՍՊԸ-ին առաջարկել է շտկել անհամապատասխանությունները՝ հայտնելով, որ անհրաժեշտ է այդ չափաբաժինների մասով ներկայացնել հրավերի պայմաններին համապատասխանող տեխնիկական բնութագրեր:

Ծանուցմանն ի պատասխան «Պրեմիում Մաշիների Էյ Էմ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն, որով չի շտկել անհամապատասխանությունները, այլ գրությամբ հիմնավորել է կազմակերպության դիրքորոշումը հայտով ներկայացված և հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովը, քննարկելով «Պրեմիում Մաշիների Էյ Էմ» ՍՊԸ-ի գրությունը՝ որոշեց մերժել վերջինիս հայտը Մրցույթի 1-3-րդ չափաբաժինների մասով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ և Մրցույթի հրավերի 8.9-րդ կետերը:

ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նշված դրույթը ավելի բացված տեսքով նախատեսվել է նաև Մրցույթի հրավերի 8.12-րդ կետով, որի համաձայն՝ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (այդ թվում շտկման ենթակա), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի վճարել հայտի ապահովման գումարը:

Ընկերությանը 13.03.2024թ. ծանուցվել է առ այն, որ հայտի մերժման արդյունքում ընկերությունը կարող է վճարել ներկայացրած հայտի ապահովումները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն խուսափել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելուց:

Հաշվի առնելով, որ «Պրեմիում Մաշիների Էյ Էմ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և սահմանված ժամկետում չի վճարել հայտի ապահովումը, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «Պրեմիում Մաշիների Էյ Էմ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ